07.04.26 - 07.04.26
13:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի դահլիճ

Ս.թ. ապրիլի 7-ին՝ ժամը 13:00-ին, ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի դահլիճում Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ տեղի կունենա **«Կարիերայի կողմնացույց. գտի՛ր քո ուղին»** խորագրով միջոցառումը՝ նվիրված արդի աշխատաշուկայի միտումներին և պահանջներին:

Հանդիպմանը մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել հայտը **մինչև ս.թ. ապրիլի 6-ը**:

Գրանցման հայտը՝ այստեղ:

Միջոցառման առաջին և երկրորդ հատվածներում նախատեսվում են.

- ***«Կարիերայի առաջին քայլերը. գործատուների սպասելիքները»*** *խորագրով պանելային քննարկում,*
- ***«Կարիերայի կողմնացույց. գտի՛ր քո ուղին»*** *շարունակական աջակցության ծրագիր:*

Մոդերատոր՝ Աննա Մաքսուդյան (ԵՊՀ «Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար)

Օրվա բանախոսներ՝

- **Մարիանա Էդիլյան** («Վիվա Արմենիա» ՓԲԸ, ՄՌԿ տնօրեն)
- **Նարեկ Հակոբյան** («HR Drone» և «M-One» ընկերությունների համահիմնադիր)

- **Նելլի Փուրթոյան** («Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա» ՓԲԸ, ՄՌԿ բաժնի տնօրեն)
- **Էմմա Մարգարյան** («Սոֆթ Կոնստրակտ» ՓԲԸ, Խմբի հավաքագրման մենեջեր)
- **Հեղինե Միքայելյան** («Ինեկոբանկ» ՓԲԸ, ՄՌԿ տաղանդների ներգրավման և վերապատրաստման ծառայության ղեկավար)

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am